Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԵՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Թեմա՝ <<Սկզբնաղբյուրների և փաստերի օգտագործման ուսումնական գործընթացը պատմության դասին>>

Վերապատրաստող, մենթոր՝ Գայանե Մանուկյան

Ուսուցիչ՝ Լենա Թարվերդյան

2023թ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ I

Սկզբնաղբյուրների եվ փաստերի հետ աշխատանքը պատմության դասին.....5

Գլուխ II

Օրվա դասի պլանի օրինակներ.....19

Եզրակացություն.....27

Օգտագործված գրականության ցանկ.....29

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմության դասերը չի կարելի կազմակերպել և անցկացնել առանց ուսուցման մեթոդների: Ուսուցման մեթոդը ուսուցչի և սովորողի փոխկապակցված համատեղ գործունեության եղանակն է, որն ուղղված է կրթության բովանդակության յուրացմանը: Պատմության դասավանդման մեթոդիկայում

տարածված են բազում մեթոդներ, որոնցից են աշխատանքը պատմական փաստերի ու սկզբնաղբյուրների հետ:

Սկզբաղբյուրների հետ աշխատանքը նպաստում է ուսուցչի խոսքի ավելի պակերավոր դառնալուն, եզրահանգումները կլինեն ավելի հաստատուն ու հիմնավորված: Սկզբնաղբյուրով աշխատանքի մեթոդը կարևոր միջոց է ուսուցումն ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու համար: Այս հանգամանքը սկզբնաղբյուրը դարձնում է ուսուցման գործընթացը խթանող միջոց: Սկզբնաղբյուրով աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին ոչ միայն տեղեկանալ հակասություններին ու տարաձայնություններին, այլև մասնակցել դրանց քննարկմանը և ավելի ամբողջական պատկերացում կազմել այդ հարցի շուրջ:

Այս կուրսային աշխատանքում մենք կներկայացնենք սկզբնաղբյուրների ու փաստերի կիրառման գործընթացը պատմության դասի ընթացքում: Աշխատանքը ստեղծվել է մատենագրական, բանահյուսական, հետազոտական և վերլուծական գրքերն ու նյութերը ուսումնասիրելու արդյունքում:

Աշխատանքի նպատակն է՝

- Ներկայացնել սկզբնաղբյուրների հետ աշխատանքի բնույթն ու դրա նշանակությունը սովորողների գիտելիքների խորացման գործում:
- Ուսումնասիրել փաստերի ուսուցման գործընթացը, կիրառվող մեթոդները:

Աշխատանքի խնդիրներն են՝

- Ուսումնասիրել սկզբնաղբյուրների հետ աշխատանքի բնույթն ու էությունը
- Անդրադառնալ սկզբնաղբյուրների հետ աշխատանքի ձևերին, մեթոդներին
- Նկարագրել սկզբնաղբյուրների տեսակները
- Ուսումնասիրել փաստերի ուսուցումը և օգտագործվող մեթոդները

Թեմայի արդիականությունը: Արդի պայմաններում, երբ կրթության ու գիտության առաջընթացն իր հետ բերում է նաև փոփոխություններ դասապրոցեսում, երբ ավանդական մեթոդները չեն տալիս ցանկալի արդյունքը, իսկ դասավանդումը դարձել է ներառվող ու ինտերակտիվ, անհրաժեշտ է նորովի ուսումնասիրել ու մշակել մեթոդներ, որոնցով Պատմություն առարկայի դասավանդումը կլինի ավելի հետաքրքիր և արդյունավետ: Պատմական սկզբնաղբյուրների կիրառման դերը մեծ է Պատմության դասավանդման գործում. ուստի անհրաժեշտ է սկզբնաղբյուրների կիրառումը ներկայացնել նորովի, նոր մեթոդների, ՏՏ-ի միջոցով: Փաստերի ուսումնասիրումը Պատմության դասավանդման հիմնաբարերից է և փաստերի ուսուցումը ևս պետք է ներկայացնել նոր մեթոդներով՝ ներառելով բոլոր աշակերտներին:

Գրականության տեսություն: Օգտվել եմ հիմնականում «Методика преподавания истории в школе»[1], Конспект лекций по курсу “Методика преподавания истории

[1] Студеникин М. Т., Методика преподавания истории в школе, Москва, 2000.

в школе”[2], «Հայոց պատմություն 8-9, Ուսուցչի ձեռնարկ, Երևան»[3], Պարադիգմա հիմնադրամի «Գիրք պատմության ուսուցման,. ինչու՞, ինչպես՞»[4] աշխատություններից:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի նպատակն ու խնդիրները, արդիականությունը, գրականության տեսությունը և աշխատանքի կառուցվածքը:

Գլուխ I Սկզբնաղբյուրների և փաստերի հետ աշխատանքը պատմության դասին՝ ներկայացված են, սկզբնաղբյուրների ու փաստերի հետ աշխատանքի բնույթը, դրանց տեսակները, թե ինչ մեթոդներ կարելի է կիրառել և թե ինչպես աշխատել սկզբնաղբյուրների ու փաստերի հետ:

Գլուխ II Օրվա դասի պլանի օրինակներ. բերված են պատմության տարբեր թեմաների 3 դասապլաններ, որոնք ուղղված են սկզբնաղբյուրների և փաստերի հետ աշխատանքին:

Եզրակացության մեջ ներկայացված են ուսումնասիրության ընթացքում մեր ունեցած եզրահանգումներն ու կարծիքները:

## ԳԼՈՒԽ I
## ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Պատմության դասերը չի կարելի կազմակերպել և անցկացնել առանց ուսուցման մեթոդների: Ուսուցման մեթոդը ուսուցչի և սովորողի փոխկապակցված համատեղ գործունեության եղանակն է, որն ուղղված է կրթության բովանդակության յուրացմանը: Պատմության դասավանդման մեթոդիկայում տարածված են.

- Խոսքային մեթոդները (պատմելը, զրույցը, դասախոսությունը և այլն),
- Զննական մեթոդները (նկարագրությունները, ցուցադրումները և այլն),
- Գործնական մեթոդները (վարժությունները, տարբեր առաջադրանքի կատարումը և այլն),
- Տրամաբանական մեթոդները (ինդուկտիվ (մակածում), դեդուկտիվ (արտածում), և այլն),
- Ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (վերարտադրողական, այսինքն՝բացատրական-ցուցադրական և պրոբլեմային-որոնողական, այսինքն՝պրոբլեմային շարադրանք, էվրիստիկ զրույց, հետազոտական աշխատանք),
- Հետաքրքրությունների խթանման մեթոդները (ճանաչողական խաղեր, հուզական խթանում և այլն),

[2] https://hist.bsu.by/images/stories/files/uch_materialy/do/hist/4/MPI_Kozik/Konspect.pdf
[3] Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013:
[4] Գիրք պատմության ուսուցման. ինչո՞ւ, ինչպե՞ս, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, Երևան, 2020:

- Ինտերակտիվ-կառուցողական մեթոդները (խճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, աշխատանք սկզբնաղբյուրի հետ և այլն),
- Համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային աշխատանք, շրջագայություն պատկերասրահում, խմբային հետազոտություն, մտածիր–զույգ կազմիր – քննարկիր, ձնակույտ, այլն և այլն),
- Քննադատական մտածողության մեթոդները (վերլուծական, գնահատողական էսսեներ, եթե ես լինեի և այլն)
- Ինքնուրույն աշխատանքի մեթոդները (ինքնուրույն աշխատանք դասագրքով, սկզբնաղբյուրներով, ուսումնագիտական պիտույքներով, 5 բոպեանոց շարադրանք, աղյուսակի լրացում և այլն):[5]

Բնական է, որ ուսուցիչը միանգամից մեկ դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների այս հարուստ զինանոցը: Նա պետք է յուրաքանչյուր, կոնկրետ դասի համար կատարի ուսուցման մեթոդների ընտրություն:

Պատմության դասավանդման լավագույն մեթոդներից է սկզբնաղբյուրով աշխատանքի մեթոդը: Դեռևս 1863 թվականին պրոֆեսոր Ստասյուլևիչը արտահայտեց այն միտքը, որ սովորողների պատմական գիտելիքները կշատանան պատմական սկզբնաղբյուրները ու փաստաթղթերը ուսումնասիրելով, քան դասագրքերի հետ աշխատելով: Մի խումբ մեթոդիստներ ևս այն կարծիքին էին, որ դպրոցում պատմության ուսուցումը պետք է կառուցել փաստաթղթերի հիման վրա: Բայց դա միայն այն բանից հետո, երբ սովորողները կյուրացնեն դասագրքի համապատասխան թեման:

Ո՞րն է սկզբնաղբյուրների բնույթը: Դրանք օգնում են աշակերտներին պատմությունը ավելի պատկերավոր ու գունեղ պատկերացնել: Կարդալով որևէ սկզբնաղբյուր, մենք կզգանք պատմական տվյալ ժամանակաշրջանի ոգին: Սկզբաղբյուրները նաև նպաստում են ուսուցչի խոսքի ավելի պակերավոր դառնալուն, եզրահանգումները կլինեն ավելի հաստատուն ու հիմնավորված[6]: Սկզբնաղբյուրով աշխատանքի մեթոդը կարևոր միջոց է ուսուցումն ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու համար[7]:

Այս հանգամանքը սկզբնաղբյուրը դարձնում է ուսուցման գործընթացը խթանող միջոց: Սկզբնաղբյուրով աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին ոչ միայն տեղեկանալ հակասություններին ու տարաձայնություններին, այլև մասնակցել դրանց քննարկմանը և ավելի ամբողջական պատկերացում կազմել այդ հարցի շուրջ: Աղբյուրները կարևոր դեր ունեն աշակերտների գիտելիքների վերլուծական կարողությունների ու հմտությունների զարգացման գործում: Ուղղակիորեն առնչվելով սկզբնաղբյուրի նյութին՝ աշակերտը ունենում է զարմանալու, հարցադրումներ անելու,

[5] Студеникин М. Т., Методика преподавания истории в школе, стр. 9.
[6] Глазырина Т., Методика преподавания истории, Новополоцк, 2011, стр. 117.
[7] Студеникин М., Методика преподавания истории в школе, стр. 132-135.

բացատրելու և մեկնաբանելու հնարավորություն: Այսինքն, սկզբնաղբյուրների հետ աշխատելով, աշակերտները կկարողանան ինքնուրույն աշխատել, կարդալ, գնահատել սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները, վերլուծել դրանք:

Սկզբնաղբյուրներն ընտրելիս պետք է հաշվի առնել՝

- հետաքրքրության աստիճանը, այսինքն՝ որքանով է սկզբնաղբյուրը հետաքրքիր, կարևոր, օգտակար և ուսումնասիրվող նյութին համապատասխան,
- բարդության աստիճանը, այսինքն՝ որքանով է սկզբնաղբյուրի բարդությունը համապատասխանում աշակերտների մակարդակին, և ինչ օգտակար նյութեր (բառարան, սկզբնաղբյուրի ստեղծում և տեքստի մասին մանրամասն տեղեկություններ) կարելի է տալ սկզբնաղբյուրը հեշտությամբ յուրացնելու համար,
- ծավալը, այսինքն՝ աշակերտներին տրվող սկզբնաղբյուրը կամ նրա մի հատվածը ինչ ծավալ պետք է ունենա, կամ սկզբնաղբյուրի որ հատվածը պետք է ընտրել հիմնական գաղափարն արտահայտելու համար,
- տեսակետների բազմազանությունը, այսինքն՝ սկզբնաղբյուրում ուսուցանվող թեմայի վերաբերյալ կան տարբեր տեսակետներ, հակասություններ,
- աղբյուրների բազմազանությունը, այսինքն՝ ընդգրկվել են արդյոք տարբեր տեսակի աղբյուրներ,
- հասանելիությունը, աշակերտները կարող են արդյոք գտնել այդ սկզբնաղբյուրները[8]:

Դասարանում սկզբնաղբյուրով աշխատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել սկզբնաղբյուրի հետ աշխատանքի կազմակերպման ձևը, այսինքն՝ ինչպես օգտագործել սկզբնաղբյուրը (քննարկում կազմակերպել դրա շուրջ, գրավոր աշխատանք հանձնարարել, բանավոր ներկայացնել, դառնել դերային խաղի թեմա) ինչպես աշխատել՝ անհատական, թե փոքր խմբերով, ինչպես ներկայացնել կատարված աշխատանքը՝ հարցաթերթիկ, ակնարկ, նկար, բանավոր խոսք և այլն, ինչպես գնահատել աշակերտներին՝ թեստ, այունաշար և այլն:

Սկզբնաղբյուրները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ փաստային սկզբնաղբյուրներ և նկարագրող սկզբնաղբյուրներ: Այս երկուսը միմյանց հետ շատ փոխկապակցված են և լրացնում են միմյանց: Փաստային սկզբնաղբյուրները իրավական, քաղաքական, ծրագրային՝ հրաման, համաձայնագիր, փաստաթղթեր են, իսկ նկարագրող սկզբնաղբյուրները՝ նամակներ և այլն[9]:

Սկզբնաղբյուրներով աշխատանքի ձևերը, մեթոդները և դրանց ներկայացումը

---

[8] Никулина Н., Методика преподавания истории в средней школе, Калининград, 2000, стр. 44-46.

[9] Студеникин М., Методика преподавания истории в школе, стр. 136-142.

- Ամենատարածված ձևը փաստաթղթի վերաբերյալ հարցեր տալն է:

  Հարցեր կարելի է տալ երկու ձևով.

  ա. Կարելի է նախնական հարցեր ձևակերպել և առաջարկել այդ հարցերի պատասխանները գտնել սկզբնաղբյուրում,

  բ. Կարելի է աշակերտներին առաջարկել թեստային հարցեր, որոնց նրանք պետք է պատասխանեն սկզբնաղբյուրին ծանոթանալուց հետո:

- Սկզբնաղբյուրի վերլուծության հարցաթերթիկի օգտագործումը:
- Գրել ակնարկ սկզբնաղբյուրի մասին: Աշակերտները կարող են ակնարկներում գրել սկզբնաղբյուրի հիմնական գաղափարի, այդ գաղափարը հիմնավորող փաստարկների համոզիչ լինելու մասին: Աշակերտներն ակնարկում պետք է գրեն նաև այն զգացմունքների ու զգացումների մասին, որ առաջացել են սկզբնաղբյուրը ընթերցելիս (թե ինչ զգացումներ առաջացրեց և ինչ տպավորություն գործեց սկզբնաղբյուրը): Անհրաժեշտ է ակնարկում տալ սկզբնաղբյուրի վերլուծությունը:
- Աշակերտին առաջարկվում է գրել պատասխան սկզբնաղբյուրի հեղինակին՝ իրեն պատկերացնելով որպես տվյալ ժամանակաշրջանի մարդ:
- Սկզբնաղբյուրով աշխատանքը կարելի է կատարել նաև բանավոր: Այս դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել դերային խաղի, բանավեճի մեթոդները: Այս մեթոդներն արդյունավետ են, եթե աշակերտներն աշխատում են մեկից ավելի սկզբնաղբյուրով:
- Կարելի է առաջարկել աշակերտներին սկզբնաղբյուրը ներկայացնել պատկերային ձևով: Նրանք կարող են պատրաստել նկարներ, ծաղրանկարներ, պաստառներ, բեմականացված ներկայացումներ, սահիկաշարեր[10]:
- Սկզբնաղբյուրների հետ աշխատելիս կարելի է կիրառել այլ մեթոդներ, օրինակ «Վենի դիագրամը», այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով:

Տարբերություն, առանձնահատկություն Տարբերություն, առանձնահատկություն



[10]Глазырина Н., Методика преподавания истории, стр. 118.

Նմանություն

Վենի դիագրամը կարող է ունենալ ինչպես պարզ կառուցվածք, այնպես էլ բարդ (երեք-չորս հասկացությունների համեմատության համար):

10-րդ դասարանում Հայ ժողովրդի կազմավորումը, Հայ ժողովրդի կազմավորման վերաբերյալ առկա ավանդազրույցները ուսումնասիրելիս կարող ենք օգտագործել թեմայի վերաբերյալ հետևյալ սկզբնաղբյուրները՝ Ստրաբոնի «Աշխարհագրություն»-ը[11], Հերոդոտոսի «Պատմություն ինը գրքից» աշխատությունը[12], Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»[13]: Մենք կարող ենք երեխաներին ծանոթացնել հայկական, հունական ու վրացական ավանդությունների հետ ու դրանք համեմատել այս դիագրամի միջոցով.

Հայկական ավանդություն

Վրացական ավանդություն[14]

Թորգոմի /Թարգամոսի/

որդին է: Հաղթում է Նեբրովթին՝ Բելին:




Հունական ավանդություն

[11] Ստրաբոն, Աշխարհագրություն, Երևան, 2011:
[12] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986:
[13] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990
[14] Հայ ժողովրդի պատմության էրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 27-30:

*T*-ձև աղյուսակ

T-ձև աղյուսակը օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և կազմակերպման ձևով և կառուցվածքով: Այն կարող կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների կամ հակադրություն արտահայտող արձագանքների գրառման համար: Այս մեթոդը ճկուն է նաև այն իմաստով, որ դրա օգտագործումը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս: Մեկ փաստի, իրադարձության, պատմական գործչի, որևէ այլ թեմայի ուսումնասիրման ընթացքում, երբ կիրառվում է որևէ սկզբնաղբյուր, այս աղյուսակի միջոցով կարող ենք վեր հանել սկզբնաղբյուրի, դրա հեղինակի տեսակետը, կարծիքը այդ թեմայի վերաբերյալ:

| Դրական | Բացասական |
|---|---|
| | |

Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը, պատմագրական վերլուծությունը թույլ են տալիս աշակերտներին ծանոթացնել պատմաբանների գրվածքներին, ինչպես նաև ներկայացնել այն մարդկանց տեսակետները, որոնք ստեղծում են հանրային պատկերացումները պատմության մասին՝ թանգարանների ղեկավարներ, կինոբեմադրիչներ, հեռուստատեսային պրոդյուսերներ, լրագրողներ և արձակագիր գրողներ: Օրինակ, մեր դասագրքեր «Խաչակրաց արշավանքները» թեման գրեթե միշտ ներկայացվում է խաչակիրների տեսակետից, թերևս ընդգրկելով առանձին անդրադարձներ այնպիսի առաջնորդներին, ինչպես Սալադինը (Սալահ ալ-Դին Յուսուֆ) կամ Զանգին (Իմադ ալ-Դին Զանգի), գուցե նաև դասագրքի սեղմ հատված՝ իսլամի ծագման և հավատալիքների մասին: Այնուամենայնիվ, այդ ժամանակաշրջանի մի շարք արաբ ժամանակագիրների գրքեր թարգմանվել են բազմաթիվ եվրոպական լեզուներով, առաջ են եկել մի քանի գրքեր, որոնք մեծապես հիմնվում են նրանց վկայությունների վրա: Օգտագործելով այս ռեսուրսները,

ինչպես նաև քրիստոնեական աղբյուրների վրա հիմնվող ավելի ավանդական նյութերը՝ ուսուցիչը կարող է վերցնել մի շարք հիմնական իրադարձություններ և հանձնարարել համեմատել, թե ինչպես էին դրանք ընկալվում քրիստոնյա և արաբ ժամանակագիրների կողմից: Այդ իրադարձություններից են, օրինակ՝ Յերուսաղեմի վերագրավումը 1099 թ-ին, Հաթթինի ճակատամարտը 1187 թ-ին, Աքրայի պաշարումը 1189-91 թթ., Տրիպոլիի անկումը 1289 թ-ին: Այնուամենայնիվ, մինչև մեր բերած օրինակի կամ այլ թեմայի վերաբերյալ վկայությունները համեմատելը, օգտակար է ուսումնասիրության սկզբում քննարկել, ինչպես էին կողմերը ընկալում միմյանց և ինչպես էին այդ ընկալումները փոփոխվում անմիջական շփումների և տեղի ունեցող իրադարձությունների ազդեցության տակ: Օգտակար է ընդգրկել մի քանի մեջբերումներ, որոնք արտացոլում են միմյանց մասին եղած պատկերացումները[15]:

Աշակերտները կարող են վերլուծել հետևյալ գրավոր սկզբնաղբյուրները՝

- Թերթ, հանդես
- Մամլո հաղորդագրություն
- Նամակ
- Հեռագիր
- Գովազդ
- Գիտական աշխատություն
- Գրական ստեղծագործություն
- Նկար/լուսանկար
- Իրավական փաստաթուղթ[16]

Սկզբնաղբյուրների հետ աշխատելու և դրանք ճիշտ հասկանալու համարյաշտ կարևոր է աշակերտների ուշադրությունը հրավիրել որոշ կողմնորոշիչ հարցերի վրա՝ կազմվելով Հարցաթերթիկներ. օրինակ՝

Տարեգրություններ, ժամանակագրություններ

- Ի՞նչ փաստաթուղթ է սա /տեսակը/: Ե՞րբ է ստեղծվել:
- Ո՞վ է սկզբնաղբյուրի հեղինակը: Ի՞նչ գիտեք նրա մասին:
- Ի՞նչ նպատակով է ստեղծվել սկզբնաղբյուրը:
- Սկզբնաղբյուրի հեղինակը իր նկարագրած դեպքերի մասնակից ու ժամանակակից է, թե՞ այն ստեղծել է ուրիշների կողմից պատմածների ու իր լսածների հիման վրա:
- Սկզբնաղբյուրի հեղինակը չեզո՞ք է, թե ունի որևէ շահագրգռվածություն, որն ազդել է նրա ստեղծածի վրա:

---

[15] Ստրադլինգ Ռ., Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը. ուսուցչի ձեռնարկ, ԵԽ, 2003, էջ 72:
[16] Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9, էջ 52:

- Սկզբնաղբյուրը ստեղծվել է անձնական օգտագործմա՞ն, փոքր խմբի՞, թե՞ հասարակության ավելի լայն շերտերի համար:
- Սկզբնաղբյուրը պարզապես տեղեկացնո՞ղ է, թե ունի համազող բնույթ: Սկզբնաղբյուրի ոճի միջոցով պարզեք՝ հեղինակը փորձում է անաչառ լինել, թե՞ համոզող:
- Սկզբնաղբյուրը գրվել է նկարագրվող իրադարձությունների ընթացքում, դրանից անմիջապես հետո՞, թե որոշ ժամանակ անց:
- Ինչու՞ է այս փաստաթուղթը կարևոր:
- Ու՞մ է ուղղված սկզբնաղբյուրը/կամ ու՞մ համար է այն:
- Ո՞րն է ամենակարևոր փաստը այս սկզբնաղբյուրում: Որքանո՞վ է այն արդիական:
- Նշե՛ք 3 խնդիր, որը կարևորվում է սկզբնաղբյուրում:
- Ի՞նչ ծանոթ բառեր կան այս փաստաթղթում և ի՞նչ են դրանք նշանակում:
- Փաստաթղթի որևէ մաս անհասկանալի է՞, ինչու՞:
- Ընտրե՛ք գլխավորը ու հիմնականը, հիմնավորել ընտրությունը,
- Բնութագրե՛ք/գնահատե՛ք այդ փաստաթղթի մեջ ներկայացված քաղաքական գործիչներին ու նրաց գործունեությունը:
- 1-2 հարց ուղղե՛ք սկզբնաղբյուրի հեղինակին:
- Նկարագրե՛ք, թե ինչպե՞ս վերլուծեցիք փաստաթուղթը[17]:

Հրամաններ, օրենքներ, պետական գործիչների խոսքեր, հրամանագրեր, պետական այլ փաստաթղթեր

- Նկարագրեք այս փաստաթղթի ստեղծման պայմանները՝ որտե՞ղ, ե՞րբ և ինչու՞ է այն ստեղծվել:
- Ո՞վ է փաստաթղթի հեղինակը: Ի՞նչ գիտեք նրա կյանքի ու գործունեության վերաբերյալ:
- Բացատրե՛ք փաստաթղթում կիրառվող հասկացությունները:
- Հասարակության ո՞ր շերտի/խմբի համար է նախատեսված այս փաստաթուղթը:
- Ինչո՞վ է այս փաստաթուղթը տարբերվում այլ երկրների նմանատիպ փաստաթղթերից:

Միջպետական փաստաթղթեր. պայմանագրեր, հեռագրեր, պետական գործիչների նամակագրություններ

- Քարտեզի վրա ցույց տվե՛ք այս փաստաթղթում նշված երկրները»
- Բնութագրե՛ք փաստաթղթի ստեղծման պատմական ժամանակաշրջանը:
- Վերլուծե՛ք փաստաթղթի դրական ու բացասական հատկանիշերը կողմերից յուրաքանչյուրի համար՝ մասնավորապես և միջազգային հարաբերությունների համար՝ ընդհանրապես:
- Բացատրե՛ք, թե ինչու՞ է կնքվել նմանատիպ պայմաններով պայմանագիր:

[17] Ղուկասյան Ա., Հայոց պատմություն, էջ 51:

- Այս փաստաթղթի հիման վրա ի՞նչ տնտեսական, քաղաքական ու տարածքային փոփոխություններ են կատարվել:
- Ի՞նչ բնույթ ուներ այս փաստաթուղթը. հանրայի՞ն էր, թե՞ գաղտնի: Ինչու՞:
- Գնահատե՛ք այս փաստաթղթի բնույթն ու ազդեցությունը:
- Մտածե՛ք, թե ի՞նչ պայմաններ պետք է լինեին, որ փաստաթուղթը կնքվեր/կազմվեր այլ պայմաններով:

Պետական գործիչների ճառեր, պետական ծրագրեր

- Ո՞վ է փաստաթղթի հեղինակը: Ի՞նչ քաղաքական հայացքներ ուներ նա:
- Որտե՞ղ և ե՞րբ է փաստաթուղթը ստեղծվել և ի՞նչ քաղաքական պայմաններում:
- Ինչի՞ն է ուղղում իր խոսքը փաստաթղթի հեղինակը:
- Հասարակության ո՞ր շերտի հետաքրքրություններն ու շահերն է նա արտահայտում:
- Տվե՛ք պատմական գնահատական այս փաստաթղթին:

Կենսագրություններ/հուշագրություններ, օրագրեր, նամակներ

- Ո՞վ է փաստաթղթի հեղինակը: Ի՞նչ սոցիալական դիրք ուներ նա:
- Ի՞նչ է նկարագրում փաստաթղթի հեղինակը:
- Ինչո՞վ կբացատրեք հեղինակի տեսակետները ու դիրքորոշումները նկարագրվածի վերաբերյալ:
- Ինչո՞վ է նման և ինչո՞վ է տարբեր հեղինակի տեսակետները ու դիրքորոշումները տվյալ իրադարձության վերաբերյալ, եթե համամատենք նույնը նկարագրող այլ սկզբնաղբյուրի հեղինակի հետ:
- Վստահու՞մ եք փաստաթղթի հեղինակին: Ինչու՞
- Կիսու՞մ եք փաստաթղթի հեղինակի տեսակետներն ու կարծիքները: Ինչու՞:

Պոեզիա, դրամա, էպոս, միֆեր ու ավանդազրույցներ, երգեր և այլն

- Քարտեզի վրա ցույց տվե՛ք փաստաթղթում նկարագրվող իրադարձությունների տարածաշրջանը:
- Նկարագրվող հագուստների և այլ դետալների միջոցով բնութագրե՛ք սկզբնաղբյուրի ստեղծման դարաշրջանը:
- Սկզբնաղբյուրի հեղինակը հերոսների միջոցով ի՞նչ է փորձում հաղորդել:
- Ինչպե՞ս է հեղինակը ներկայացնում հերոսների արարքները: Համաձա՞յն եք նրա տեսակետների հետ: Ինչու՞:
- Հեղինակը հասարակության ի՞նչ շերտի/խավի ներկայացուցիչ էր:
- Որքանո՞վ էր հեղինակը օբյեկտիվ և սուբյեկտիվ:

- Գրական այլ ստեղծագործություններում հանդիպե՞լ եք նմանատիպ այուժեների: Ո՞ր ստեղծագործություններն են դրանք: Ինչո՞վ են նման և տարբեր այուժեները[18]:

Հայերի ծագման հայկական ավանդությունը կարող ենք ներկայացնել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» աշխատության համապատասխան մասերը, այսինքն Նոյի սերունդների, Հայկի ու Բելի, Արամ թագավորի վերաբերյալ հետևյալ ենթագլուխները ընթերցելով և դրանք վերլուծելով՝

- Գիրք առաջին, Գլուխ Դ, Ժ, ԺԱ, ԺԲ[19]:

Կարող ենք նաև Հերոդոտոսի գրքից ուսումնասիրել ու վերլուծել Գլուխ VII –ի այն մասերը, որոնք վերաբերվում են արմենիին: Ծանոթանալուց ու ընթերցելուց հետո երեխաներին կարող ենք տալ հետևյալ հարցերը՝

- Ո՞վ է հայերի նախնին՝ ըստ Մովսես Խորենացու և ի՞նչ ծագում ունի նա:
- Ու՞մ հետ է նա պատերազմել և ինչպե՞ս է հաղթանակ տարել:
- Որտե՞ղ է հաստատվել:
- Ե՞րբ է տեղի ունեցել Բելի ու նրա զորքի դեմ հայերի տարած հաղթանակը:
- Որտե՞ղ հաստատվեցին Հայկի ժառանգները:
- Ու՞մ էին նման հայերը, ըստ Հերոդոտոսի վկայության:
- Ինչո՞վ էին նման:

Համոզելու նպատակ ունեցող սկզբնաղբյուրների վերլուծություն. շատ հաճախ սկզբնաղբյուրների հեղինակները միտում ու նպատակ են ունենում համոզել իրենց ընթերցողներին՝ ներկայացնելով որոշակի փաստեր և տեսակետներ: Աշակերտը պետք է կարողանա վերլուծել հեղինակի տեսակետները, նրա դատողությունների ընթացքը՝ հասկանալու համար, թե կողմնակալություն կա, թե ոչ: Սկզբնաղբյուրը վերլուծելիս պետք է ուշադրություն դարձնել հեղինակի հետևյալ մոտեցումներին՝

- Ընդհանրացումներն ու չափազանցությունները
- Որպես փաստեր ներկայացվող տեսակետները
- Օգտագործված բառապաշարը[20]:

Պետք է անպայման նշել, որ բացի աշակերտների կողմից սկզբնաղբյուրների հետ աշխատելուց, դրանց հետ պետք է աշխատեն նաև ուսուցիչները: Ուսուցիչը նախքան սկզբնաղբյուրի հետ աշխատել հանձնարարելը, պետք է լավ ծանոթ լինի դրան, ներկայացնի այդ սկզբնաղբյուրի հեղինակին, ստեղծման ժամանակաշրջանը[21]:

---

[18] Конспект лекций по курсу “Методика преподавания истории в школе”, https://hist.bsu.by/images/stories/files/uch_materialy/do/hist/4/MPI_Kozik/Konspect.pdf, стр. 36-38:

[19] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գիրք առաջին, Գլուխ Դ, Ժ, ԺԱ, ԺԲ:

[20] Ղուկասյան Ա., Հայոց պատմություն, էջ 52:

[21] Студеникин М., Методика преподавания истории в школе, стр. 132-142.

Պատմության ուսումնասիրության ու դասավանդման հիմնաբարերից է փաստերի ուսուցումը: Փաստ բառը լատիներենից թարգմանաբար նշանակում է «իրագործված, իրականացված»[22]: Փաստերի ուսուցումը իր դերն ունի նաև պատմական տարբեր երևույթների միջև փոխկապակցվածության, պատճառահետևանքային կապը հասկանալու համար:

Փաստերը լինում են մի քանի տեսակ՝

- Իրադարձություններ–դրանք այն դեպքերն են, որոնք տեղի են ունեցել կոնկրետ տեղում, կոնկրետ ժամանակում.օրինակ՝ Ջիրավի ճակատամարտ, Ստալինգրադի ճակատամարտ և այլն
- Երևույթներ–սրանք իրենցից որոշակի հասկացություններ են ենթադրում՝ հեղափոխություններ, բարեփոխումներ, ասպատմբություններ
- Գործընթացներ–սա մի քանի երևույթների, իրադարձությունների շղթայակապ համակցությունն է, որը ունի իր պատճառներն ու արդյունքները/հետևանքները: Օրինակ՝ արդյունաբերական հեղաշրջում, միջնադարյան քաղաքների առաջացում և այլն[23]:

Իրենց բնույթով պատմական փաստերը լինում են՝

- Գլխավոր–այն փաստերն են, որոնք տվյալ երկրի, ժողովրդի համար տվյալ ժամանակաշրջանում ունեցել են կարևոր ու էական նշանակություն
- Ոչ գլխավոր–այն փաստերն են, որոնք միմյանց են կապում տարբեր գործընթացներ, ունեցել են ժամանակավոր բնույթ[24]:

Պատմական փաստերի ուսուցման գործում կիրառելի է աղյուսակների օգտագործումը, օրինակ՝

| Թվական | Իրադարձություն |
|---|---|
| | |

Key3 աղյուսակ

| Կարևոր անուն | Կարևոր թվական | Կարևոր իրադարձություն |
|---|---|---|
| | | |

Քարտեր՝

Ուսուցիչը կարող է պատրաստել փաստերին վերաբերող քարտեր, օրինակ՝

[22] Նույն տեղում:
[23] Конспект лекций по курсу “Методика преподавания истории в школе”, https://hist.bsu.by/images/stories/files/uch_materialy/do/hist/4/MPI_Kozik/Konspect.pdf, стр. 7.
[24] Նույն տեղում, էջ стр. 8:

- Նշված է թվականը, աշակերտը պետք է դրան համապատասխանեցնի իրադարձության բարը/և հակառակը
- Նշված է իրադարձությունը, աշակերտը պետք է գտնի և համապատասխանեցնի տվյալ իրադարձության հերոսին/գործչին

Թեստեր՝ ինքնուրույն աշխատանքի փուլում պատմական փաստերի ուսուցումը կարող է իրականացվել դասի թեմայի վերաբերյալ փոքրիկ թեստի հանձնարարման միջոցով, որտեղ կլինեն հարցեր փաստերի վերաբերյալ և ընտրության տարբերակներ[25]:

Նկարագրել փաստերը/իրադարձությունները

| Սոցիալ տնտեսական | Քաղաքական | Կրոնական | Մշակութային | Այլ[26] |
|---|---|---|---|---|
| | | | | |

| Թվականը | Կարճաժամկետ ազդեցություն | Երկարաժամկետ ազդեցություն[27] |
|---|---|---|
| | | |

# ԳԼՈՒԽ II
# ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Օրվա դասի պլան ***№1***

Ամիս,ամսաթիվ-25.04.2022

Դպրոց-

[25] Конспект лекций по курсу “Методика преподавания истории в школе”, https://hist.bsu.by/images/stories/files/uch_materialy/do/hist/4/MPI_Kozik/Konspect.pdf, стр. 11-12.

[26] Գիրք պատմության ուսուցման. ինչո՞ւ, ինչպե՞ս, էջ 201:

[27] Նույն տեղում:

Դասարան-10-րդ

Առարկա-Հայոց պատմություն

Դասի թեմա-Հայոց ծագումնաբանության հարցը

Դասի տևողությունը-45րոպե

Դասի նպատակները՝

- Ծանոթանալ Հայոց ծագումնաանության վերաբերյալավանդազրույցներին:
- Ներկայացնել Հայոց ծագումնաբանության վերաբերյալ եղած մոտեցումները:
- Ձեռք բերել շփման հմտություններ (լսելու,քննարկելու,ընդհանուր եզրակացություններ անելու,դիմացինի կարծիքը հաշվի առնելու):
- Ստեղծել դրական կախվածության մթնոլորտ:

Հիմնական հասկացություններ-հայերի ծագում, հայկական, վրացական, հունական ավանդազրույցներ, Հայկ, Բել, հայեր, Արմենիա, արմեններ:

Միջառարկայական կապեր-Համաշխարհային պատմություն

Անհրաժեշտ պարագաներ-դասագրքեր, տետրեր, գրատախտակ, գրիչներ, Մովսես Խորենացու գիրքը, Հերոդոտոսի գիրքը:

Դասի տիպը-համագործակցային

Դասի ընթացքը

- Խթանման փուլ-6 ր

Դասը սկսվում է Հայոց ծագումնաբանության հարցը թեմայի մասին ուսուցչի ներածական զրույցով: Այնուհետև անց է կացվում մտքերի տարափ՝հայերի ծագումը հասկացության վերաբերյալ: Գրատախտակին գրվում են հայոց ծագումնաբանության գաղափարի վերաբերյալ աշակերտների ասած բոլոր բառերն ու արտահայտությունները: Ուսուցիչը բոլոր ցանկացողներին հնարավորություն է տալիս արտահայտվելու:

Դասարանը բաժանում ենք 5 հոգանոց 3 խմբերի և տալիս ենք դասի հետ առնչվող տեղանուններ՝Հայկ, Արմենոս, Հայոս: Խմբերում ընդգրկում ենք տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների:

- Իմաստի ընկալում -30 ր

Յուրաքանչյուր խմբի հանձնարարվում է կարդալ իրենց հանձնարարված հատվածները, ապա թեմայի վերջում լրացուցիչ նյութի տեսքով տրված սկզբնաղբյուրները և Մովսես Խորենացու, Հերոդոտոսի ու Ստրաբոնի աշխատությունների համապատասխան հատվածները, դրանցից ելնելով պատասխանել ուսուցչի կողմից թերթիկների վրա գրված և խմբերին բաժանված հարցերին.

Խումբ «Հայկ»-կարդալ «Հնդեվրոպական նախահայրենիք, Հայկական ավանդություն» ենթավերնագրերը և Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից Հայկի մասին հատվածը, ապա պատասխանել հետևյալ հարցերին.

- Հնդեվրոպական նախահայրենիքը ո՞ր տարածքներն է ընդգրկում:
- Ո՞ր ժողովուրդներն են հանդիսանում բնիկ տերերն ու ժառանգորդները այդ հայրենիքի:
- Ըստ Խորենացու հաղորդած հայկական ավանդության՝ ո՞վ է հայերի նախնին.Նկարագրե՛ք նրան:
- Ու՞մ է հաղթում նա, որտե՞ղ են հաստատվում նրա ժառանգները:

Խումբ «Արմենոս»-կարդալ «Հունական ավանդազրույցը հայերի մասին ենթավերնագիրը» և Ստրաբոնի վկայությունը հայերի մասին. պատասխանել հետևյալ հարցերին.

- Հունական ավանդազրույցը հայերի ծագման մասին ու՞մշնորհիվ է հասել մեզ:
- Ըստ հունական ավանդության ո՞վ է հայերի նախնին:
- Ինչպե՞ս է նա հաստատվել Հայաստանում:
- Ի՞նչ անուն է նա տվել երկրին ու ժողովրդին:

Խումբ «Հառս»-կարդալ «Վրացական ավանդազրույցը և հայերի ծագման հարցը պատմագիտության մեջ» երթավերնագրերը և թեմայի վերջում եղած «Վրացական ավանդազրույցը՝ հայերի ծագման մասին» լրացուցիչ նյութը և պատասխանել հետևյալ հարցերին.

- Ըստ վրացական ավանդազրույցի ո՞վ է հայերի նախահայրը:
- Ի՞նչ ծագում ունի նա:
- Երկրի ո՞ր մասում էր իշխում:
- Ե՞րբ գիտության մեջ ի հայտ եկան տեսակետներ հայերի ծագման մասին և դրանք ի՞նչ էին ներկայացնում:

Խմբային աշխատանքի արդյունքները բանավոր ներկայացնելու համար յուրաքանչյուր խմբի հատկացնել 5րոպե:

- Կշռադատման վուլ (8րոպե)

Սկզբնաղբյուրը կարդալուց և հարցերին պատասխանելուց հետո Վենի դիագրամ մեթոդի միջոցով համեմատել հայերի ծագման մասին հայկական, հունական ու վրացական ավանդազրույցները:

Գնահատում և անդրադարձ (3րոպե)

Տնային առաջադրանք (1 րոպե)-Սովորել դասը, պատասխանել դասի վերջում եղած հարցերին ու առաջադրանքներին:

Օրվա դասի պլան №2

Ամիս,ամսաթիվ-25.04.2022

Դպրոց-

Դասարան-12-րդ

Առարկա-Հայոց պատմություն

Դասի թեմա–Հասարակական–քաղաքական կյանքը

Դասի տևողությունը–45րոպե

Դասի նպատակները՝

- Ներկայացնել կոմ. կուս.–ի մենիշխանության ձևավորման ընթացքը
- Նկարագրել անհատի պաշտամունքի ձևավորման էությունը
- Դատողություն անել Խորհրդային Միությունում ընդունված ճնշումների օրենդրական հիմքերի վերաբերյալ
- Մոդելավորել քաղաքական ճնշումների կենդանի օրինակ

Հիմնական հասկացություններ– Անհատի պաշտամունք, քաղաքական բռնաճնշումներ, մենիշխանություն, ժողովրդի թշնամի

Միջառարկայական կապեր–Գրականություն, Համաշխարհային պատմություն

Անհրաժեշտ պարագաներ–Պլանշետ, կպչուն թղթեր՝ նոր նյութի ներկայացման համար, տետրեր, գրիչներ

Դասի տիպը–Համագործակցային

Դասի ընթացքը

- Խթանման փուլ–7ր

Մեջբերումներ, Սոկրատեսյան քննարկում. Սովորողներին հանձնարարվում է ընթերցել մեջբերումներ ԽՍՀՄ Սահմանադրությունից /ժողովրդի թշնամի լինելու վերաբերյալ/ և իրականացնել Սոկրատեսյան քննարկում: Տրվում է 7 ր ժամանակ:

- Իմաստի ընկալում–34 ր

Սովորողներին տրվում է 7 րոպե ժամանակ, որպեսզի նրանք ուսումնասիրեն

նյութը և 10–ր ժամանակ՝ այն ներկայացնելու համար որպես դեպքերի ականատես: Հանձնարարվում է ներկայացնել նյութը ըստ երկու դրույթի՝ ինչու՞, ինչպե՞ս /ինչո՞ւ էր ԽՍՀՄ ղեկավարությունը հալածանքների ենթարկում Դաշնակցության ներկայացուցիչներին, ներկուսակցական ընդդիմադիրներին, Հայոց եկեղեցուն և ինչպե՞ս, ինչ եղանակով էին իրականացվում այդ բռնաճնշումները/: Սովորողները ընթերցում են նյութը, կպչուն թերթիկների վրա կատարում իրենց նշումները, մեկնաբանում դրանք և խմբավորում գրատախտակին գրված «Ինչու» և «Ինչպես» խմբերում:

Դերային խաղ. 12ր

Սովորողները ընտրում են իրենց դերերը /Ե. Չարենց, դատավոր, դատախազ, ատենակալներ, վկաներ/ և դերային խաղ–«Պատմությունը դատարանի առջև» մեթոդով ներկայացնում Ե. Չարենցին առաջադրված

մեղադրանքը /ընթերցում բանաստեղծի հակաստալինյան բանաստեղծությունները/, քաղաքական ճնշումները և դատը:

Ձեկույց. 5 ր. Աշակերտներին հանձնարարվում է գրել զեկույց 1936-1939 թթ. Հայաստանում կիրառված բռնաճնշումների վերաբերյալ:

- Կշռադատման փուլ-4ր

Ամփոփում 1 նախադասությամբ.Ուսուցիչը հրահանգում է աշակերտներին մեկ նախադասությամբ ձևակերպել օրվա դասի կարևոր դրույթը:

Գնահատում և անդրադարձ.Ուսուցիչը անդրադառնում է դասի նպատակներին՝ նշելով, թե որքան են հասել այդ նպատակներին:

Տնային հանձնարարությունը՝ պատասխանել հարցերին և կատարել առաջադրանքները 1-4, էջ 15:

Օրվա դասի պլան №3

Ամիս,ամսաթիվ-25.04.2022

Դպրոց-

Դասարան-11-րդ

Առարկա-Հայոց պատմություն

Դասի թեմա-Մայիսյան հերոսամարտերը

Դասի տևողությունը-45րոպե

Դասի նպատակները՝

- Նկարագրել Մայիսյան հերոսամարտերը
- Համեմատել և վերլուծել պատմական սկզբնաղբյուրները Կարսի և Ալեքսանդրապոլի հանձման մասին
- Գնահատել Մայիսյան հերոսամարտների նշանակությունը այսօրվա Հայաստանի համար

Հիմնական հասկացություններ- Ջավախքի և Շիրակի գոյամարտ, Սոգյուրլու, Բաշ-Ապարան, Սարդարապատ, Ղարաբիլիսա, Դանիել Բեկ-Փիրումյան, Դրո, Գարեգին Նժդեհ, Գևորգ Ե Սուրենյանց

Միջառարկայական կապեր-Համաշխարհային պատմություն

Անհրաժեշտ պարագաներ- Կպչուն թերթիկներ, պլանշետ, տեսասահիկ, քարտեզ, գրատախտակ, կավիճ A4 թղթեր, գրիչներ, արկղ, գունավոր թերթիկներ, հեռախոս, համացանց

Դասի տիպը-Համագործակցային

Դասի ընթացքը

- Խթանման փուլ-5ր

Ուսուցիչը ողջունում է աշակերտներին, հանձնարարում վերցնել գունավոր թերթիկները և 1րոպեի ընթացքում թերթիկի վրա գրել՝ 1հատկանիշ, 1առարկա և 1երևույթ, որոնք թեզ մոտ ասոցացվում են Մայիսյան հերոսամարտերի հետ: Ընթացքում հնչում է Պ. Սևակի բանաստեղծության հիման վրա ստեղծված "Սարդարապատ" երգը: https://youtu.be/sBtRA2WWFCo

Ավարտելուց հետո սովորողներն ընթերցում են իրենց մտքերը, պատասխանում ուսուցչի հարցերին. «Ի՞նչ ես զգում այս երգը լսելիս: Ինչու՞ այդ երևույթի/ առարկայի հետ ես ասոցացնում»: /2ր/

Կպչուն թերթիկների վրա նախապես գրված են դասի նպատակները, որոնք ընթերցվում են աշակերտների կողմից և փակցվում գրատախտակին (դրանք ճշված են նաև սահիկաշարի վրա): Ուսուցիչը մեկնաբանում է դասի նպատակների կարևորությունը, ճշում այն գիտելիքները և հմտությունները որոնք կստանանք դասի ընթացքում: /2ր/

- Իմաստի ընկալում-35ր

Ուսուցիչը սահիկաշարի միջոցով ներկայացնում է Մայիսյան հերոսամարտերը, գրատախտակին գծում է աղյուսակ՝ ճշելով կարևոր իրադարձությունները-թվականները-կարևոր անունները: Աղյուսակը աշակերտները գծում են իրենց տետրում:

Սովորողները դիտում են տեսանյութեր հերոսամարտերի մասին՝ https://youtu.be/q9Ahu3dSogA https://youtu.be/O-WVp0OnKOM Դրոյի խոսքերը Բաշ Ապարանի մասին (30-32ր) https://youtu.be/DaUPHwG2WWU

Ապա աշակերտներն արկղից վերցնում են գունավոր թերթիկները, որոնք համարակալված են 1,2,3: Ըստ վերցրած թվի՝ բաժանվում են 3խմբի:

Պատմական հակասական մեկնաբանություններ, Սոկրատեսյան քննարկում (մեթոդները՝ "Պարադիգմա" կրթական հիմնադրամ (2020), Գիրք պատմության ուսուցման. ինչու՞, ինչպե՞ս)

Յուրաքանչյուր խմբի տրվում է Կարսի հանձնման, թուրքերի և ԱԺԴՀ-ի պայմանավորվածության, Ալեքսանդրապոլի հանձնման մասին Հ.Քաջազնունու, Ա. Խատիսյանի, Ս. Վրացյանի խոսքերը և հանձնարվում ընթերցել դրանք, ապա քննարկել և հարցաթերթիկների վրա գրավոր պատասխանել հետևյալ հարցերին՝

- 1-ին խումբ-1. Ինչպիսի՞ համադրություններ կան սկզբնաղբյուրներում: 2.Վարչապետերից որի՞ խոսքն էր ավելի վերլուծական և փաստական,տեքստի ո՞ր հատվածների/արտահայտությունների հիման վրա է կարելի այդպիսի եզրակացություն անել: 3. Ինչպիսի՞ դիրքորոշումներ և աշխարհայացք ունեն վարչապետերը: Որո՞նք են դրանց միջև առկա տարբերությունները և նմանությունները:

- 2-րդ խումբ-1.Ինչպիսի՞ հակասություններ կան սկզբնաղբյուրներում: 2. Վարչապետերից որի՞ խոսքն էր ավելի հուզական, տեքստի ո՞ր հատվածների/արտահայտությունների հիման վրա է կարելի այդպիսի ենթադրություն անել: 3. Ինչպիսի՞ դիրքորոշումներ և աշխարհայացք ունեն վարչապետերը: Որո՞նք են դրանց միջև առկա տարբերությունները և նմանությունները:
- 3-րդ խումբ-1. Որո՞նք են հիմնական կետերը, որոնց շուրջ վարչապետերի խոսքերը համադրվում են: 2. Որո՞նք են հիմնական կետերը, որոնց շուրջ վարչապետերի խոսքերը հակադրվում են: 3. Ինչպիսի՞ դիրքորոշումներ և աշխարհայացք ունեն վարչապետերը: Որո՞նք են դրանց միջև առկա տարբերությունները և նմանությունները:

Սկզբնաղբյուրները և հարցաթերթիկները թղթային տարբերակներով տրամադրվում են աշակերտներին: Առաջադրանքի կատարման համար սովորողներն ունեն 9 ր:

Որպես ինքնուրույն աշխատանք՝ ուսուցիչը յուրաքանչյուր աշակերտի տալիս է A4 թղթեր (կամ հանձնարարում տեղծել google docs փաստաթուղթ) և հանձնարարում է գրել շարադրանք-գնահատել Մայիսյան հերոսամարտերի պատմական և ռազմական նշանակությունը՝ անդրադառնալով հետևյալ կետերին՝

- Ինչպիսի՞ ռազմական նշանակություն ունեցան՝

ա) Ջավախքի և Շիրակի գոյամարտերը

բ) Բաշ-Ապարանի ճակատամարտը

գ) Սարդարապատի հերոսամարտ:

- Մայիսյան հերոսամարտերը ինչպիսի՞ նշանակություն ունեն մեր այսօրվա Հայաստանի համար:
- Կշռադատման փուլ-5ր

Ուսուցիչը աշակերտներին տալիս է գունավոր թերթիկներ և հանձնարարում պատասխանել դրանց վրա գրված հարցերին՝

1)Նշիր մեկ հարց, որ կտաս Մայիսյան հերոսամարտի մասնակիցներից որևէ մեկին:

2)Ի՞նչը քեզ մոտ այս դասին լավ ստացվեց և որտե՞ղ դժվարացար: Գնահատիր քո աշխատանքն այս դասին 10բալանոց սանդղակով:

Կատարվում է գնահատում

Տնային հանձնարարություն՝ սովորել դասը:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի մի բերելով ուսումնասիրության արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ՝

- Պատմության դասավանդման բազմազան մեթոդների մեջ իրենց ուրույն տեղն ունեն սկզբնաղբյուրների հետ աշխատանքն ու փաստերի ուսուցման մեթոդները: Սկզբնաղբյուրների հետ աշխատանքն ու փաստերի ուսումնասիրումը պատմության դասավանդման գործընթացում ունեն անփոխարինելի նշանակություն, քանի որ առանց փաստերի չի կարող լինել պատմություն, իսկ առանց սկզբնաղբյուրների՝ չեն կարող լինել փաստեր:
- Սկզբնաղբյուրները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ փաստային սկզբնաղբյուրներ և նկարագրող սկզբնաղբյուրներ: Փաստային սկզբնաղբյուրները իրավական, քաղաքական, ծրագրային՝ հրաման, համաձայնագիր, փաստաթղթեր են, իսկ նկարագրող սկզբնաղբյուրները՝ նամակներ և այլն:
- Փաստերը լինում են մի քանի տեսակի՝ իրադարձություններ, երևույթներ, գործընթացներ, որոնք ընդհանուր առմամբ փոխկապակցված են միմյանց հետ:
- Սկզբնաղբյուրների հետ աշխատանքի մեթոդը կարևոր միջոց է ուսուցումն ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու համար: Այն մեծապես նպաստում է աշակերտի ինքնուրույն աշխատանքի կառուցմանը, որ նա ինքնուրույն ուսումնասիրի սկզբնաբյուրը, կարդա և վերլուծի այն: Օգնում է աշակերտին պատմությունը ավելի պատկերավոր ու գունեղ պատկերացնել ու ընկալել:
- Սկզբնաղբյուրով աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին ոչ միայն տեղեկանալ հակասություններին ու տարաձայնություններին, այլև մասնակցել դրանց քննարկմանը և ավելի ամբողջական պատկերացում կազմել այդ հարցի շուրջ: Սկզբնաղբյուրները կարևոր դեր ունեն աշակերտների գիտելիքների վերլուծական կարողությունների ու հմտությունների զարգացման գործում: Ուղղակիորեն առնչվելով սկզբնաղբյուրի նյութին՝ աշակերտը ունենում է զարմանալու, հարցադրումներ անելու, բացատրելու և մեկնաբանելու հնարավորություն: Այս ամենն օգնում է երեխաներին ունենալ վերլուծական միտք, բանավիճելու կարողություն, սեփական կարծիք է ձևավորում, այդ կարծիքը պաշտպանելու ու զարգացնելու կարողություն: Սկզբնաղբյուրների օգտագործումը պատմության դասերին ունի շատ մեծ դեր ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու գործում, նպաստում է երեխաների ինքնուրույն աշխատանքին և այդ սկզբնաղբյուրները կարող ենք երեխաներին ներկայանել մի շարք մեթոդներով:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ

1. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986, 651էջ:
2. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, 298էջ:
3. Ստրաբոն, Աշխարհագրություն, Երևան, 2011, 158 էջ:

Ուսումնասիրություններ

1. Գիրք պատմության ուսուցման. ինչո՞ւ, ինչպե՞ս, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, Երևան, 2020:
2. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, 528 էջ:
3. Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013:
4. Ստրադլինգ Ռ., Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը. ուսուցչի ձեռնարկ, ԵԽ, 2003:
5. Глазырина Т., Методика преподавания истории, Новополоцк, 2011, 326.
6. Никулина Н., Методика преподавания истории в средней школе, Калининград, 2000.
7. Студеникин М., Методика преподавания истории в школе, Москва, 2000.

Համացանցային պաշարներ

8. Конспект лекций по курсу “Методика преподавания истории в школе https://hist.bsu.by/images/stories/files/uch_materialy/do/hist/4/MPI_Kozik/Konspect.pdf.